

32002D0360

**2002/360/ԵՀ Չինական երկարաբեղիկի ներմուծման դեմ պաշտպանության
համար Ավստրիայի կողմից ընդունված միջոցներում կատարվելիք
փոփոխությունները սահմանող՝ Հանձնաժողովի 2002 թվականի մայիսի 13-ի
որոշում (ծանուցված՝ համաձայն թիվ C (2002) 1821 փաստաթղթի)**

Պաշտոնական տեղեկագիր, L 127, 14.05.2002թ., էջ 0019 - 0020

**Չինական երկարաբեղիկի ներմուծման դեմ պաշտպանության համար
Ավստրիայի կողմից ընդունված միջոցներում կատարվելիք փոփոխությունները
սահմանող՝ Հանձնաժողովի 2002 թվականի մայիսի 13-ի որոշում**

(ծանուցված՝ համաձայն թիվ C(2002) 1821 փաստաթղթի)

(Վավեր է միայն գերմաներեն տեքստը)

(2002/360/ԵՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով վերջին անգամ Հանձնաժողովի 2002/28/ԵՀ¹ հրահանգով
փոփոխված՝ «Բույսերի կամ բուսական արտադրատեսակների համար վնասակար
օրգանիզմները Համայնք ներմուծելու եւ Համայնքում դրանք տարածելու դեմ
պաշտպանիչ միջոցների մասին» Խորհրդի 2000 թվականի մայիսի 8-ի
2000/29/ԵՀ հրահանգը² եւ, մասնավորապես, դրա 16(3) հոդվածը,

հաշվի առնելով Ավստրիայի կողմից 2001 թվականի օգոստոսի 2-ին կատարված
հաղորդագրությունը,

Քանի որ

¹ ՊՏ L 77, 20.03.2002թ., էջ 23:

² ՊՏ L 169, 10.07.2000թ., էջ 1:

1) Եվրոպական միությունում առաջին անգամ 1999 թվականին Չինական երկարաբեղիկ վնասակար օրգանիզմը հայտնաբերելուց հետո, 1999/516/ԵՀ որոշմամբ³ փոփոխված՝ Հանձնաժողովի 1999/355/ԵՀ որոշմամբ⁴ Չինաստանի առումով (բացառությամբ Հոնկոնգի) սահմանվել են Չինական երկարաբեղիկի տարածման դեմ արտակարգ միջոցներ,

2) այս վնասակար օրգանիզմն առաջին անգամ Եվրոպական միությունում՝ Վերին Ալստրիա նահանգի Բրաունաու քաղաքի սրատերեւ թխկենու վրա հայտնաբերելուց հետո, Ալստրիան իրականացրեց միջոցառումների ծրագիր 2000/29/ԵՀ հրահանգի 16(2) հոդվածին համապատասխան՝ վերահսկելու համար այդ օրգանիզմի ներմուծումն ու տարածումն Ալստրիայում եւ Համայնքի տարածքում,

3) Ալստրիայի կողմից ընդունված միջոցներն ավելի խիստ էին, քան 1999/355/ԵՀ որոշմամբ նախատեսված միջոցները, այն առումով, որ դրանց գործողությունը տարածվում էր Կորեայում, Թայվանում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ինչպես նաեւ Չինաստանում առաջացող ներմուծվող ընկալունակ կարծր փայտանյութի վրա: Ավելին, դրանցով նախատեսվում էր, որ ներմուծվող փայտը պետք է կեղեւազերծված լինի եւ չունենա միջատների կողմից առաջացրած՝ 3 մմ–ից ավելի տրամագծով անցքեր, ինչպես նաեւ չորացված լինի վառարանում՝ ապահովելով 20%–ից պակաս խոնավություն: Ի տարբերություն դրա՝ 1999/355/ԵՀ որոշմամբ պահանջվում է, որ փայտը կա՛մ կեղեւազերծվի եւ չունենա միջատների կողմից առաջացրած անցքեր, կա՛մ չորացված լինի վառարանում՝ ապահովելով 20%–ից պակաս խոնավություն,

4) այնուամենայնիվ, ավստրիական միջոցների գործողությունը չէր տարածվում Եվրոպական հաճարենու անտառների եւ կաղնու փայտի վրա,

5) Ալստրիան հիմնավորել է այս միջոցներն իրեն եւ Համայնքի տարածքը պաշտպանելու անհրաժեշտությամբ, քանի որ. «ըստ Ալստրիայի՝ «Չինաստանի առումով (բացառությամբ Հոնկոնգի) Չինական երկարաբեղիկի տարածման դեմ արտակարգ միջոցների մասին» 1999/355/ԵՀ եւ 1999/516/ԵՀ որոշումների

³ ՊՏ L 197, 29.07.1999թ., էջ 44:

⁴ ՊՏ L 137, 01.06.1999թ., էջ 45:

համաձայն իրականացվող՝ ներկայիս Համայնքային միջոցների ուժեղացումը ողջամիտ կլիներ...»,

6) մինչ այժմ հնարավոր չի եղել բացահայտել աղտոտման աղբյուրը, չնայած, ըստ որոշ հատկանիշների, Չինական երկարաբեղիկով վարակված փաթեթավորման նյութերի ներմուծումն աղտոտման ամենահավանական ճանապարհն է: Այնուամենայնիվ, այս դեպքում էլ դեռեւս չկան բավարար ապացույցներ՝ ենթադրելու համար, որ Համայնքի միջոցները ոչ բավարար են,

7) ըստ այդմ, Ավստրիան պետք է ճշգրտումներ մտցնի իր կողմից ընդունված միջոցների առումով՝ իրեն եւ Համայնքի տարածքը նշված վնասակար օրգանիզմի ներմուծման դեմ պաշտպանելու նպատակով,

8) 1999/355/ԵՀ որոշմամբ եւ 2000/29/ԵՀ հրահանգով նախատեսված միջոցները կվերանայվեն «Միջազգային առետրում փայտի փաթեթավորման նյութերը կանոնակարգող ուղեցույցների մասին» ՊԳԿ միջազգային ստանդարտի շրջանակներում,

9) սույն Որոշմամբ նախատեսված միջոցները համապատասխանում են Մոլդորակի առողջության հարցերով մշտական հանձնաժողովի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՈՐՈՇՈՒՄԸ.

Հոդված 1

Ավստրիան ճշգրտումներ է մտցնում իր կողմից ընդունված միջոցների առումով՝ իրեն եւ Համայնքի տարածքը Չինական երկարաբեղիկի ներմուծման ու տարածման դեմ պաշտպանելու նպատակով՝ պայմանով, որ միջոցները համապատասխանեն 1999/355/ԵՀ որոշմանը:

Հոդված 2

Սույն Որոշումը հասցեագրված է Ավստրիայի Հանրապետությանը:

Կատարված է Բրյուսելում, 2002 թվականի մայիսի 13-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Դեյվիդ Քիրն

Հանձնաժողովի անդամ